



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 11 ՄԱՅԻՍ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստաբար չոր Յիսուս, Կուր ինձ իմաստաբար զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 50

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Աստուած, Տէր Աստուածը ինք՝ խօսեցաւ, եւ կոչ ուղղեց աշխարհին,
արեւընդմեջ մինչեւ արեւմուտք:
Աստուած պիտի փայլատակէ Սիոնէն, որ կատարեալ է իր գեղեցկութեամբ:
Մեր Աստուածը պիտի գայ՝ ոչ թէ լուռ կերպով, այլ՝ իր առջեւէն՝ լափող կրակով,
եւ զինք շրջապատող սաստիկ փոթորիկով:
Երկինք ու երկիր վկայ պիտի կանչէ, որպէսզի դատէ իր ժողովուրդը:
«Իմ քովս հաւաքեցէք ինձի հաւատարիմ մարդիկը,
որոնք զոհի մատուցմով ինձի հետ ուխտ կնքած են»:
Եւ երկինքը պիտի հռչակէ անոր արդարութիւնը,
որովհետեւ Աստուած ինքն է դատաւորը:
«Լսէ, ո՛վ իմ ժողովուրդս, ես պիտի խօսիմ,
եւ քեզի դէմ պիտի վկայեն, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ,
ես՝ Աստուածս, քու Աստուածդ:
Քու զոհերուդ համար չէ որ քեզ կը յանդիմանեն,
ոչ ալ մշտականօրէն ինձի մատուցած ողջակէզներուդ համար:
Ես պէտք չունիմ ագարակիդ ցուլերուն, ոչ ալ գոմերուդ նոխազներուն,
որովհետեւ իմս են անտառին բոլոր կենդանիները,
եւ հազարաւոր լեռներու վրայ արածող նախիրները.
Ժանօթ են ինձի եւ ինձի կը պատկանին:
Ես ցուլերու մի՞ս կ'ուտեմ, կամ նոխազներու արի՞ւն կը խմեմ:
Եթէ ինձի զոհ պիտի մատուցես՝ երախտագիտութիւնդ ընծայէ,
եւ կատարէ Բարձրեալ Աստուծոյս տուած քու խոստումներդ.
օգնութեան կանչէ զիս՝ երբոր նեղութեան մէջ ես,
եւ քեզ պիտի ազատեմ, եւ դուն պիտի փառաւորես զիս»:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխաշիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէ ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈՐՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԵԼԻՑ ԻԴ (24) ԳԼՈՒԽ



ՈՒՄՆԱԿ ԿՆՔՈՒՄԾ (24:1-11)

Մովսես ժողովուրդը պարտադրեց երբ ու անոնց հաւաքարմութեան խոստումը առնելէ յետոյ, որ այսպէս կ'արտայայտուին, ըսելով. «Տիրոջ ըսած բոլոր խօսքերը պիտի կատարենք» (3 հմր), ան լերան ստորոտին սեղան մը կը կանգնեցնէ ու անոր շուրջը 12 արձաններ, քարեր, որոնք 12 ցեղերը կը խորհրդանշեն: Այդ սեղանին վրայ «ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր կը մատուցեն Տիրոջը» (5 հմր): Ողջակէզները ամբողջութեամբ այրուելու սեղանին վրայ, իսկ խաղաղութեան զոհերու միտք յետոյ ճաշակելու այն անձերուն հետ, որոնք Մովսէսի հետ միասին լեռ պիտի բարձրանային:

Որմէ յետոյ, «Մովսէս արիւնին կէտը սեղանին վրայ սրկեց, ու կէտը ժողովուրդին վրայ սրկեց: Ահա բոլոր այս խօսքերուն համաձայն՝ Տիրոջը ձեզի հետ ըրած ուխտին արիւնը» (7-8 հմր):

Ահա այսպէս կը տեսնենք երկու երեւոյթ.-

1. Ուխտին կնքումը:

2. Ուխտին կնքումը արիւնով:

Հեղաքրքրականօրէն, երբ կը կարդանք Եբրայեցոց նամակը, այնպէս կը խօսի Քրիստոսի գոհագործումին մասին ըսելով, ռեւէ ուխտ կը կնքուի արիւնով: Ինչո՞ւ անպայման այս արեան ներկայութիւնը:

Նախ, ուխտ կը նշանակէ դաշինք, համաձայնութիւն: Ուրեմն եթէ Աստուծոյ եւ Իսրայէլի ժողովուրդին միջեւ ուխտ կը կնքուի, այսինքն համաձայնութիւն, դաշինք հաւաքարմութեան, բարեկամութեան: Իսկ գալով արեան հարցին: Մենք գիտենք Ծննդոց գիրքէն, թէ մեղքին վարձքը մահ է: Ուրեմն երբ մարդը մեղանշեց, կը նշանակէ մահը ճաշակեց: Մահ ճաշակել կը նշանակէ կեանքը խլել: Ուրեմն որ պիտի ազատէ, եւ ինչպէս պիտի ազատէ այդ կեանքը: Մենք գիտենք, որ արիւնը կեանքի խորհրդանիշ է: Ուստի, մարդը Աստուծոյ սրբութեան դիմաց կը ներկայանայ իբրեւ մեղաւոր, որքան ալ մարդը արդար ըլլայ, փակասին թերութիւններ ունի: Այնպէս ինչպէս Աբրահամի պարագային: Աբրահամ արդար չէր, Աստուած զայն արդար սեպեց իր հաւաքքին համար: Ուրեմն, որպէսզի մահէն փրկուինք, որովհետեւ մեղաւոր ենք, Աստուած մէկ սկզբունք փոխաւ, փրկանք փոխաւ, այսինքն՝ անձին փոխարէն անձ մը, կամ կենդանի մը անձը փոխարինելու, ինչպէս որ էր պարագան Իսահակին: Ուրեմն, կենդանին կը զոհուի անձին փոխարէն, այսինքն կեանքը ապահովելու համար: Այս ձեւը սակայն, սկզբնական ձեւն էր, անով դաստիարակուելու եւ գիտակցելու թէ ուրիշ մը յանձն կ'առնէ այդ բոլորը: Նոր Կրակարանի լոյսին փայլ, Քրիստոս Ինք պիտի ըլլար այս անգամ այն իսկական ու ճշմարիտ զոհը, անով մեզ գնելու ու մեզ մեղքի ու մահուան ստրկութենէն ազատելու: Իսկ երկրորդ զոհի փարբերակը խաղաղութեան զոհն է, եւ այդ զոհի միտքն պիտի ճաշակէին, այսինքն փեսակ մը հաղորդակցութիւն, սեղանակցութիւն Աստուծոյ հետ:

Ահա այդ ճաշակումէն յետոյ, անոնք տեսան, «Իսրայէլի Աստուածը, ու անոր ուրբերուն փակ շափիւղայով սալարկուածի պէս էր եւ պայծառութեամբ՝ բուն երկինքին պէս» (10 հմր): Շօշափելի ու թանձրական արտայայտութիւն մըն է անով ցոյց տալու կապոյտը որպէս խաղաղութեան խորհրդանիշ: Եւ այդ խաղաղութեամբ ձեւով մը Աստուած կ'ուզէ ցոյց տալ, թէ այդ կնքումով ուխտը խաղաղութեան ուխտ է:

ՄՈՎՍԷՍ ՄԻՆԱ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ (24:12-18)

Աստուած կը հրամայէ Մովսէսին «Ելի՛ր ինձի ու հոն կայնէ: Քեզի պիտի փամ քարեղէն փակարկներն ու իմ գրած օրէնքս եւ պատուիրաններս՝ որպէսզի անոնց սորվեցնես» (12 հմր): Աստուած այդ պատուիրանները կու տայ, որպէսզի ժողովուրդը սորվի, իսկ սորվեցնողը Մովսէս ինք: Սորվի պատուիրաններուն ճամբով նաեւ ճանչնալու Աստուծոյ կամքը, եւ ապրելու այդ կամքին համաձայն:

«Դուք հոս մեզի սպասեցէք, մինչեւ որ ձեզի դառնանք» (14 հմր): Մովսէս կը պատուիրէ միւսներուն, որ հոն սպասեն, մինչեւ վերադարձը: Նաեւ կը նշանակէ սպասելու վիճակ կայ: Եւ այդ սպասումին համար, սակայն համբերութիւն պէտք է, որովհետեւ այդ սպասումը կրնայ մեզ շեղել, ինչպէս պիտի շեղուէին Իսրայէլացիները:

«Մովսէս լեռը ելաւ ու ամպը պարեց լեռը: Տիրոջ փառքը Սինայ լերան վրայ հանգչեցաւ: Ամպը պարեց զանկա վեց օր եւ եօթներորդ օրը Տէրը ամպին մէջէն կանչեց Մովսէսը» (15-16 հմր): Ամպը Աստուծոյ փառքին արտայայտութիւնն է: Թէեւ մարդուն համար կ'երեւի, բայց իր մէջ պահուած բան մը ունի որ կարելի չէ տեսնել, խորհրդաւոր, ծածուկ: Աստուած Իր ուզած արեւն է որ կը խօսի:

«Տիրոջ փառաւոր փեսիքը լերանը գազաթին վրայ մաշող կրակի պէս էր» (17 հմր): Ամպին հետ նաեւ կրակի արտայայտութիւնը, որ լուսաւորութեան նաեւ մաշեցնելու արտայայտութիւնը ունի: